

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երեվանի Պետական Չամալսարանի ֆիզիկայի ֆակուլտետի Խորհրդի  
06.05.2011թ. կայացած թիվ 8.10-11 նիստի  
Նիստին ներկա էին Խորհրդի 40 անդամներից 37 –ը:

### Հաստատվեց նիստի օրակարգը՝

1. Շնորհավորանքներ՝ տեսական ֆիզիկայի ամբիոնի վարիչ, ակադեմիկոս  
Է.Վ. Չուբարյանի 75-ամյա հոբելյանի կապակցությամբ
2. Ընթացիկ հարցեր

Հոբելյանական շնորհավորանքները սկսվեցին ֆակուլտետի դեկան պրն Ռ.  
Ավագյանի խոսքով:

**Ելույթ ունեցան** ԵՊՀ-ի ռեկտորը պրն. Ա. Սիմոնյանը ներկայացրեց նրա անցած  
ուղու որոշ մանրամասներ, ներկայացրեց հոբելյարին որպես կրթության և գիտության  
բազմաշնորհ կազմակերպչի, որն իր ուրույն հետքն է թողել համալսարանական  
կրթական և գիտության համակարգերի կազմակերպման բնագավառներում,  
ցուցաբերել է հետևողականություն ու սկզբունքայնություն: Տեղեկացրեց պրն  
Չուբարյանին պետական պարգևի ներկայացնելու որոշման մասին:

ԳԱԱ նախագահ պրն. Ռ. Մարտիրոսյանը նշեց, որ Է. Չուբարյանի բոլոր  
ուսանողներն ու աշխատանքային ընկերները մեծ երջանկություն են ունեցել նրա  
հետ առնչվելու առիթով: Նշեց ԵՊՀ-ում գիտական աշխատանքի կազմակերպման  
բնագավառում նրա մեծ ներդրումը, գերխիտ միջավայրերի ֆիզիկայի  
բնագավառում մի շարք կարևոր աշխատանքների, ինչպես նաև, բազմաթիվ  
գիտական կադրերի պատրաստման մասին:

Գիտության Պետական Կոմիտեից պրն Լ.Մարդոյանը նվիրեց Կոմիտեի մեդալը:

Հետագա բազմաթիվ ելույթներում հնչեցին շնորհավորանքներ, բարի  
մաղթանքներ և վստահություն, որ ակադեմիկոս Է. Վ. Չուբարյանը բազմապատկված  
եռանդով կշարունակի իր գործը, որին նվիրված է տարիներ շարունակ:

**Ընթացիկ հարցերում** մոլեկուլային ֆիզիկայի ամբիոնի վարիչ Եվա Դալյանը  
ներկայացրեց ասպիրանտներ Գ. Ն. Հայրապետյանի ատենախոսության թեմայի  
վերաանվանման, դեկավարի և ատենախոսության շիֆրի փոփոխման հարցը, և Շ.Ա.  
Տոնոյանի ատենախոսության թեմայի վերաանվանման և ատենախոսության շիֆրի  
փոփոխման հարցերը:

**Որոշեցին** – 1) վերահաստատել՝ Գոռ Նորայրի Հայրապետյանի  
ատենախոսությունը «Օդակային գործոնը նուկլեինաթթուների կոնֆորմացիոն  
անցումներում» թեմայով՝ Գ-00-02 Կենսաֆիզիկա մասնագիտությամբ: Գիտական  
դեկավար նշանակել՝ ֆիզմաթ.գիտ. դոկտոր, Ե.Շ. Մամասախլիսովին:

2) վերահաստատել՝ Շուշանիկ Արմենի Տոնոյանի ատենախոսությունը /Գ-00-02  
Կենսաֆիզիկա/: մասնագիտությամբ «Կենսապոլիմերներում պարույր-կծիկ անցման  
տեսությունը ցածրամոլեկուլային միացությունների առկայության դեպքում»  
թեմայով: Գիտական դեկավար՝ ֆիզ-մաթ.գիտ. դոկտոր, Վ.Ֆ.Մորոզով:

**Ֆակուլտետի** մեթոդական Խորհրդի նախագահ Ա. Մուրադյանը քննարկման  
ներկայացրեց ընդհանուր ֆիզիկայի և աստղաֆիզիկայի ամբիոնի ներկայացրած,

դոցենտ Ռ.Յ. Գաբրիելյանի, պրոֆեսորներ Ս.Խ. Մինասյանցի և Ժ.Բ. Խաչատրյանի "Էլեկտրականություն" աշխատանքը որպես ուսումնական լաբորատոր աշխատանքների ձեռնարկ համանուն առարկայի լաբորատոր փորձերի ուսումնական ծրագրում ընդգրկելու նպատակահարմարության և դրա տպագրության ներկայացնելու երաշխավորության հարցը:

**Որոշեցին** – երաշխավորել ձեռնարկը հրատարակությանը ԵՊՀ տպարանում՝ հաշվի առնելով ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը:

**Խորհուրդը** պրն Ռ. Ավագյանի առաջարկությամբ երաշխավորեց "ԵՊՀ լավագույն ուսանող" մրցանակաբաշխությանը մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողներ՝ Սևադա Յրաչյայի Յովսեփյանի, Արաքս Սամվելի Մարտիրոսյանի և Արման Վարդանի Մարգարյանի մասնակցությունը:

Նկատի ունենալով ուսման գերազանց առաջադիմությունը Խորհուրդը երաշխավորեց բակալավրիատի ավարտական կուրսի մի շարք ուսանողների՝ ուսումը ասպիրանտուրայում շարունակելու համար:

**Լսեցին** - օպտիկայի ամբիոնի դոցենտ, ֆիզ. մաթ. գիտ. դոկտոր Լևոն Խաչիկի Մուրադյանին պրոֆեսորի կոչում շնորհելու հարցը:

Հարցը ներկայացրեց մրցութային հանձնաժողովի նախագահ, պրոֆ. Ա. Ա. Կիրակոսյանը ներկայացրեց մրցութային հանձնաժողովի դրական եզրակացությունը: Նշեց, որ Լ.Խ. Մուրադյանի գիտամանկավարժական գործունեությունը բավարարում է պրոֆեսորի կոչման համար ՀՀ ԲՈՀ-ի կողմից առաջադրվող պահանջներին:

**Որոշեցին** – Հիմք ընդունել մրցութային հանձնաժողովի կարծիքը Լ.Խ. Մուրադյանի գիտամանկավարժական գործունեության մասին՝ երաշխավորել ֆիզ.-մաթ. գիտությունների դոկտոր, օպտիկայի ամբիոնի դոցենտ Լևոն Խաչիկի Մուրադյանին պրոֆեսորի կոչման ներկայացնելու համար:

Ֆիզիկայի ֆակուլտետի դեկան

Ռ. Ս. Ավագյան

Խորհրդի քարտուղար



Ի.Գ. Հարությունյան